

ՅՈՁԵՑ ՄԱՐԿԱՐՏ

Մահվան 100-ամյակի առթիվ)

Դ. Վ. ԱՐԳԱՐՅԱՆ

Նվրոպացի հայագետների շարքում իր պատվավոր տեղն ունի գերմանացի գիտնական Յոզեֆ Մարկվարտը, որի կյանքը, մինչև ողբերգական վախճանի վերջին ժամերը, նվիրված էր Արևելքի ժողովուրդների պատմության ուսումնասիրությանը:

Աշխարհահռչակ գիտնականը ծնվել է 1864 թ. գեկտեմբերի 9-ին՝ Գերմանիայի Վյուրտենբերգ նահանգի Ռայխենբախ ավանում: Բարձրագույն կրթությունն ստացել է Քյուրինգենի Կալսարանում, որը, ի միջի այլոց, մինչև օրս էլ հայտնի է հայկական ձեռագրերի իր թանկարժեք հավաքածուով: Աստվածաբանության, արևելագիտության և պատմության դասընթացների ուսանող Յոզեֆ Մարկվարտը համալսարանում ցուցարարում է գասական և արևելյան լեզուների այնպիսի արտակարգ իմացություններ, որոնք հնարավորություն են ստեղծում գեռ ուսանող ժամանակ նորություններ մտցնել հին լեզուների ուսումնասիրության բնագավառում: 1888 թ. գերմանական մի պատկառելի գիտական հանդեսում լույս է տեսնում նրա անդրանիկ գիտական հոդվածը, նվիրված երբայցեբերն բառերի թննությանը: Ընդամենը հինգ էջանոց այս հոդվածը 24-ամյա Մարկվարտին հայտնի է դարձնում որպես հրժուտ բանասերի: Մեկ տարի անց՝ 1889 թ. նա սկսում է շարադրել մի կարևոր և ընդարձակ ուսումնասիրություն¹, որը 1893 թ. փետրվարին ներկայացվում է որպես դոկտորական դիսերտացիա: Աշխատությունը նվիրված է հույն պատմիչ Քտեսիասի „Assyriaka“ գրքին: Քտեսիասը հույն բժիշկ էր, որ ծառայում էր պարսից արքունիքում, մ. թ. ա. 416—399 թթ., նա գրել է ը շարս մյուս աշխատությունների նաև Ստրեստանին վերաբերող վերոհիշյալ աշխատությունը՝ „Assyriaka“ վերնագրով: Ավելի քան 2350 տարի առաջ գրված այս աշխատությունը մեզ չի հասել: Նրանից մնացել են միայն հատուկենտ քաղվածքներ ավելի ուշ ժամանակներում ապրած հույն մատենագիրների մոտ (Դիոդորոս Սիկիլիացի՝ շուրջ 80—29 մ. թ. ա.): Ահա այս մնացորդների ուսումնասիրությամբ Մարկվարտը կարողանում է վերականգնել կորած գրքի համապատասխան տեղեկությունները: Դիսերտացիոն աշխատության մեջ քննված են նաև այլ հարցեր,



¹ Պրոֆ. Վ. Ֆ. Մինորսկու մատենագիտության մեջ (Essai de bibliographie des travaux de J. Markwart, Paris, 1930, էջ 313) Մարկվարտի ծննդյան ամիսը վրիպմամբ նշված է հուլիսը:

² „Die Assyriaka des Ktesias.“—„Phitologus“, Supplb. VI, 2, Göttingen, 1891—1893. էջ 501—658:

որոնց թվում՝ Դարեհ 1-ի (522—486) նշանավոր երեքլեզվյան (հին պարսկերեն, էլամերեն, բարելոներեն) արձանագրությունը՝ փորագրված Բեհիսթունի ժայռի վրա։ Արձանագրության մեջ հանդիպող ժամանակագրական տվյալները Մարկվարտը վերլուծում է յուրովի (ի տարբերություն Յուստինի, Քյոնիգի և այլոց)։

Թյուրինգենի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետին որպես դոկտորական դիսերտացիա ներկայացված այս աշխատությունը մեծ հաջողություն է ունենում և զնահատվում մասնագետների կողմից։

Համալսարանն ավարտելուց հետո Մարկվարտն ստանձնում է նշանավոր արաբագետ Ս. Պրիմի գիտական քարտուղարի պաշտոնը Բոննում։ Այստեղ նա մասնակցում է X դարի սրբա նշանավոր պատմիչ Տարարիի (839—923) երկի հատվածական բնագրի հրատարակության գործին։ 1897—1900 թթ. Մարկվարտը դառնում է Թյուրինգենի համալսարանի պրիվատ-դոցենտ։ Չնայած այս ժամանակ նա արդեն հինգ տպագիր ուսումնասիրությունների հեղինակ էր, բայց և այնպես նրա գիտական փառքը և նյութական հնարավորությունները միշտ հակասել են իրար։ Հայրենիքում համապատասխան աշխատանք չճարելով՝ նա փորձում է աշխատանք գտնել Գերմանիայից դուրս և հայացքն ուղղում է, բնականաբար, նախ դեպի Արևելք, Ռուսաստան։ Սակայն նրան չի հաջողվում իբրացործել իր մտադրությունը։

Շուտով նրան աշխատանքի են հրավիրում Հոլանդիա, որտեղ նա տասնմեկ տարի (1900—1911) պաշտոնավարում է Լեյդենի Նիգերլանդական ազգագրական թանգարանում, սկզբում որպես ասիստենտ, իսկ ապա՝ կոնսերվատոր։ 1902 թ. նա այստեղ սկսում է կարգալի դասախոսություններ Արևելքի լեզուների շուրջ։ 1910 թ. նա ձեռք է բերում ևս մի նոր պաշտոն՝ միջինասիական լեզուների ուսուցչապետի տեղապահ։ Հոլանդիայում գտնված տարիներին նա հրապարակում է տասը գիտական աշխատություն։

1912 թ. Մարկվարտը հրավիրվում է Բեռլին և նշանակվում է Բեռլինի համալսարանի փոխպաշտոնական (էքստրաօրդինար) ուսուցչապետ։ Այս թվականին լույս են տեսնում նրա ևս չորս աշխատություններ։

1920 թ. Յոզեֆ Մարկվարտը նշանակվում է Բեռլինի համալսարանի համեմատական լեզվաբանության պաշտոնական (օրդինար) ուսուցչապետ և գերմանական արևելագիտության պատմության մեջ առաջին անգամ հիմնում է հայկական բանասիրության ամբիոն (իրանական բանասիրության ամբիոնի հետ համատեղ)։ Սկսվում է հայասեր գիտնականի եռանդուն գործունեությունը՝ հայագիտական կադրեր պատրաստելու ուղղությամբ։ Համբավավոր գիտնականին միաժամանակ հանձնարարվում է Բեռլինի համալսարանի հնդգերմանական սեմինարի ղեկավարի պաշտոն։

Հայագիտական ու իրանագիտական ամբիոնի, ինչպես նաև հնդեվրոպական սեմինարի համատեղ ղեկավարությունը չի խանգարում բազմազբաղ ուսուցչապետին հետազոտություններ ձեռնարկել նաև Միջին Ասիայի պատմության վերաբերյալ։ Նրան առանձնապես հետաքրքրում է մոնղոլների պատմությունը, չնայած նա այդ ժամանակ գտնում էր, որ մոնղոլների պատմության մասին գրաղվելն ավելի հեշտ կլիներ Ռուսաստանում, քանի որ այնտեղ կա այնպիսի գրականություն, ինչպիսին է Ասիական թանգարանի գրքային հարստությունը։

Բեռլինը որչափ էլ որ հոգում է գերմանացի ուսուցչապետի գիտական համբավի համար, նույնքան էլ անտարբեր է մնում նրա կենսապայմանների նկատմամբ։ Հունգարական „Ungarische Jahrbücher“ հանդեսի 1924 թ. ղեկավարների համարում տպված մի հոդվածում, որտեղ ուսումնասիրված են X դարում հյուսիսային երկրներում ապրած մի քանի ժողովուրդներ, Մարկվարտը բացատրում է այն հանգամանքները, որոնք իրեն խանգարել են այդ հոդվածը ժամանակին պատրաստելուն։ Պատճառն այն է եղել, որ ուսումնասիրությունը գրելու հրավերը նա ստացել է հենց այն օրերին, երբ վտարված է եղել բնակարանից։

Զարմանալի խառնվածքի տեր գիտնական էր Մարկվարտը։ Այնքան անխառն ու խոր գիտականությամբ են ընթանում նրա հետազոտությունները, որ հաճախ թվում է, թե նրանց հեղինակը սուղվել է դարերի խորքը և ինչ-որ կախարդանքով բաց է անում անցյալի դռները և հասու լինում նրանց բոլոր գաղտնիքներին։ Նրա մտքի լուսարձակներն տակ ի հայտ են գալիս հազարավոր տարիներ առաջ եղած և մեկընդմիջտ անհայտացած ժողովուրդներ, պատմական եղելություններ, անուններ, բառեր, պետեր, լեզուներ։ Եվ այս բոլորից հետո հանկարծ՝ մի թոփշ դեպի արդիականություն և՛ արևելյան կրթությունամբ բողոք այս կամ այն քաղաքական անարդարության ու անարդկայնության դեմ։ Թվում է՝ Մարկվարտի նման «պտարյուն» գիտնականը շատ հեռու պետք է կանգնած լիներ քաղաքականությունից։ Հետամնաց արևելյան ժողովուրդների կյանքն ուսումնասիրող եվրոպացուց թերևս սպասելի լիներ նաև մեծապետական շովինիզմի որևէ արտահայտություն։ Բայց Մարկվարտը խիստ հեռու էր այդ ամենից։ Ընդհակառակը, նա ինքը դեմ է

դուրս եկել ժողովուրդների խտրությանը: Նշանաբանի զորությունը են հնչում մարդասեր գիտնականի հետևյալ խոսքերը՝ ընդդեմ հայ ժողովրդի ջարդարար Արդուլ Համիդի. «Մեր սերունդներն անտարակույս պետք է ամօթից շտապեն, երբ պատմության գրքերում կարդան կամ հարկադրված լինեն իրենց հարևաններից լսել այն մասին, որ Արդուլ Համիդը, homo sapiens-ի այդ ցեղուն հատանմուշը, համարձակություն է ունեցել իրեն կոչել գերման ժողովրդի բարեկամ»³: 1919 թ. Մարկվարտը բեռլինում հրապարակեց «Հայ ժողովրդի ծագումն ու վերածնունդը»⁴ աշխատությունը, որի երկրորդ մասը փաստորեն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Գերմանիայի քաղաքականությունը մերկացնող մի մեղադրական ակտ էր՝ ներկայացված համաշխարհային հասարակական կարծիքի դատավճռին:

Ինչքան էլ որ մեծ արևելագետի յուրաքանչյուր հետազոտություն իրենից ներկայացնում է չաղմամբիվ աղբյուրների վրա թափված տեղական աշխատանքի արդյունք, այնուամենայնիվ բախիղձ գիտնականը երբեք չի զլացել անհրաժեշտության դեպքում հրաժարվել այդ քրտինքի վաստակից, եթե զգացել է, որ դա սխալ հաշվումների արդյունք է: Այսպես, օրինակ, եթե նա 1901 թ. Ստրաբոնի Աշխարհագրության նույնացնում էր Ատրպատականի սահմանի վրա գտնվող Արշին-ի կամ Աօշա-ի հետ, ապա հետագայում նա պարզեց, որ նշված քաղաքը գտնվել է Բուրսի մոտ՝ «Արտաշատից դեպի արևմուտք՝ Արաքսի մոտ»⁵:

Խստապահանջ գիտնականին հատուկ է եղել նաև բժախնդիր համբերությունը: Պատրաստի աշխատանքի հրատարակությունը նա երբեմն հետաձգել է տարիներով, մինչև որ կհայտնաբերվեին իր կռահումները հավաստող առավել զորավոր տվյալներ: Այդպես է վարվել նա, օրինակ, «Պարսկահայք նահանգը» պատմա-տեղագրական ուսումնասիրության հետ: Միայն հայերեն թարգմանությամբ հետմահու հրապարակված (գերմաներեն բնագիրը դեռ մնում է անտիպ) այս ուսումնասիրության բովանդակությունից երևում է, որ այն սկսել է շարադրվել 1915 թ., ապա չնդհատումներով շարունակվել է տարիներ հետո: Այդ մասին են վկայում աշխատության 197 և 219 էջերում հանդիպող տեղեկությունները: 197 էջում Մարկվարտը «Արևելյան Անատոլիա» արտահայտության կապակցությամբ գրում է. «Հայաստանն այդպես են կոչում ներկա պատերազմում թուրքերը, որոնք վճռական նպատակ ունեն դուրս բերել բնիկ ժողովրդին», իսկ 219 էջում կարդում ենք. «Այդ վայրն էր (խոսքը Դարանաղի գոյվառում գտնվող Անի ամրոցի մասին է — Բ. Ա.), որ վերջին չի՛հաղի՝ աղետալի համաշխարհային պատերազմին ուղեկցող այդ խայտառակ երևույթի օրերին՝ թուրքական գիշատիչների միջոցով այնքան վշտալի անուն հանեց որպես բազմահազար հայ կանանց և երեխաների ջարդատեղի»: Այս տեղեկություններից առաջինը, ինչպես տեսնում ենք, գրված է պատերազմի սկզբում, երբ թուրքերը դեռ սոսկ «նպատակ ունեին» դուրս բերել հայերին և Հայաստանը կոչելու «Արևելյան Անատոլիա», իսկ երկրորդը գրված է պատերազմի ավարտից հետո, երբ Արևմտահայաստանը դարձել էր «բազմահազար հայ կանանց ու երեխաների ջարդատեղի»:

Մեծանուն գիտնականը 1930 թ. փետրվարի 3-ի գիշերն իր սենյակում գազահեղձ եղավ: Մարկվարտի մահվամբ գիտությունը կորցրեց վիթխարի անհատականության տեր մի մարդու, որով սկսվեց ու վերջացավ հայ-իրանական բանասիրության ամբիոնի դարաշրջանը: Մարկվարտից հետո ամբիոնը մեկընդմիջ փակվեց:

* * *

Սովորական մարդու ուժերից վեր է ընդգրկել նյութերի և գիտելիքների այնպիսի բազմազանություն, ինչպիսին հանդիպում է Մարկվարտի աշխատություններում: Մեծ գիտնականը զարմանալիորեն իր մեջ միավորել էր մի շարք մասնագիտություններ և հավասարաչափ ուժեղ էր թե՛

³ Über das Volkstum der Komanen, Osttürkische Dialectstudien:—Abhandl. d. Gesellschaft. d. Wissensch. zu Göttingen, N. F., Bd. XIII, № 1, Berlin, 1914, էջ 192:

⁴ Die Entstehung und Wiederherstellung d. armenischen Nation, Berlin, 1919. Մասնակի ֆրանսերեն թարգմանությունը՝ Marie Basmadjian, l'origine et la reconstitution de la nation arménienne, Paris, 1919.

⁵ Eranšahr nach der Geographie des Ps. Moses Xorenacl, Berlin, 1901.—AGWG, Phil.-hist. Kl., N. F., B. III, էջ 5, Anm. 1.

⁶ «Պարսկահայք նահանգը», «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 2, էջ 216:

⁷ Մարկվարտի ողբերգական մահվան մանրամասնությունները տե՛ս «Հանդես ամսօրյա», 1930, թիվ 1—2, էջ 114:

որպես բանասեր և թե՛ որպես պատմաբան, լեզվաբան, աշխարհագրագետ: Միայն որպես պատմաբան՝ նա ճանաչված հեղինակություն էր իրանագիտության, հայագիտության, կովկասագիտության, արաբագիտության և այլ ճյուղերի մեջ. իսկ որպես լեզվաբան՝ նա լայնորեն օգտվել է գերմաներենից, ֆրանսերենից ու անգլերենից բացի՝ հունարեն, լատիներեն, արամեերեն, ավեստա, երաշխեցերեն, ասորերեն, հայերեն, արաբերեն, հին պարսկերեն, պահլավերեն, թուրքերեն, ռուսերեն նույնիսկ... չինարեն ու աֆղաներեն լեզուների տվյալներով: Միայն գիտելիքների այսպիսի համահավաք բազմազանությունը կարող էր հնարավորություն ստեղծել զբաղվել պոլիվցիների, այսինքն՝ մի ժողովրդի պատմության ուսումնասիրության մեջ, որի «մեկ ոտքը գտնվում է Զինաստանում, իսկ մյուսը՝ Հունգարիայում» (Komanen, III): Դարձյալ պետք էր Մարկվարտի ինքնատիպությունը, որպեսզի պոլիվցիներին նվիրված ուսումնասիրության մեջ տեղ գտներ այնպիսի մի արտաքուստ անսպասելի նյութ, որպիսին է «Պատմական տեղագրության նշանակությունը Շահնամի բնագրի քննության գործում»: Ոչ միայն այս դեպքում, այլև առհասարակ հետազոտության բազմակողմանիությունը միշտ էլ ուղեկցել է Մարկվարտի աշխատություններին, և եթե երբեք խոսվել է Մարկվարտի թերությունների մասին՝ դա վերաբերել է հիմնականում նրա շեղումներին: Վերջիններիս պատճառով է, որ նույնիսկ ամենաընդարձակ գրախոսականների մեջ⁹, — իսկ այդ գրախոսականները գրել են ժամանակի լավագույն մասնագետները (Յուստի, Շավան, Բանգ, Հյուրշման, Նոլդեկե, Ֆետտեր, Շարո, Գերլանդ, Մասպերո, հայերից՝ Կետիկյան, ռուսներից Բարոն Ռոգեն, Բարտոլդ, Տուրան, Կուլակովսկի, Կատանով և շատ ուրիշներ) — հնարավոր չի եղել թվել Մարկվարտի կատարած հետազոտությունների բոլոր կողմերը և ներկայացնել ամենուրեք սփռված «արտաքու կարգի ընդարձակածավալ լեզվական ու պատմական ծանոթություններն ու սրամիտ քննադատությունները, խորաթափանց ենթադրություններն ու հանձարեղ եզրակացությունները, որոնք, — ինչպես Կետիկյանն է գրում, — մարդուս շրթունքը խաժենել կուտան»¹⁰:

Գերմանացի աշխարհահռչակ արաբագետ, իրանագետ և սեմիտոլոգ Թեոդոր Նոլդեկեն (1836—1930), որն ապրեց զրեթե մեկ դար (94 տարի) և գրեց շուրջ 700 ուսումնասիրություն, Մարկվարտի «Երանշահ» աշխատությունը գրախոսելիս (ZDMG, 1902, էջ 427—436) անհնարին է համարել քննարկել գիրքն ամբողջությամբ, և նրա շինագիտական (սինոլոգիական) մասի վերլուծությունը թողել է ուրիշներին: Այդ կապակցությամբ ակադեմիկոս Վասիլի Վլադիմիրովիչ Բարտոլդը, որը, ի դեպ, 1892 թ. (իսկ 1894 թ.՝ նաև Մաուր) Շտուտգարդում ունկնդրել է Թեոդոր Նոլդեկենին. գրում է. «Մարկվարտի ներդրումը գիտության այդ բնագավառում (խոսքը իրանի պատմական աշխարհագրության մասին է — Դ. Ա.) պետք է ճանաչվի որպես ամենանշանակալիցը բոլոր այն ներդրումներից, որոնք երբևէ եղել են: Բազմաթիվ շեղումները նյութից՝ շարադրանքը դարձրել են փոքր ինչ անձև (formlos), այսինքն՝ խճճված, բայց մանրամասն գլխացանկը և խնամքով կազմված մյուս ուղենիշ ցանկերը զգալիորեն հեշտացնում են զրբից օգտվելու գործը: Նոլդեկենն ասում է՝ Եթե նույնիսկ զրբից բացառենք ամբողջ սինոլոգիական մասը, դարձյալ Մարկվարտը տիրապետում է այնպիսի լայնածավալ լեզվաբանական և պատմագիտական գիտելիքների, որ ոչ մի գրախոսող չէր կարող որևէ լավատեղյակ բնութագիր տալ նրա գրքին՝ ամբողջությամբ վերցված»:

Սինոլոգիական մասը, որ բացառել է Նոլդեկենը՝ քննության նյութ է դարձրել հեղինակավոր գիտնական է. Շավանը (JA, 9. XVIII, էջ 550—558), որի կարծիքը դարձյալ նույնքան բարենպաստ է: Շավանը նշում է Մարկվարտի խիստ գիտական մեթոդը, տեսականների սրամտությունը, նույնացումների հավաստիությունը: Գրախոսողը Մարկվարտի աշխատությունը դիտում է որպես «Կենտրոնական Ասիայի պատմական աշխարհագրության բնագավառում երբևէ կատարված ներդրումներից ամենաէականը»¹⁰:

Եթե նկատի ունենանք, որ միջազգային արևելագիտության կողմից այսպիսի բարձր գնահատականի արժանացած երկը գրված է հիմնականում հայոց քերթողահայր Մովսես Խորենացու վերագրված «Աշխարհացոյց»-ի հիման վրա և որ հենց այդ երկին է վիճակվել դառնալ Մարկ-

⁹ Մարկվարտի աշխատություններին նվիրված գրախոսականների ցանկը տե՛ս M i n o r s k y V., Essai de Bibliographie des travaux de J. Markwart, էջ 323. Բարոն Ռոգենի անտիպ գրախոսականի և Տուրանի «Христианский восток»-ում տպված գրախոսականի մասին տե՛ս Бартольд В. В., Памяти Иосифа Маркварта, доклад, прочитанный в 6. Коллегии востоковедов 27/III 1930—Известия АН СССР, VII, серия VII, общ. наук, էջ 393:

¹⁰ Զ. Կետիկ. Պարսից աշխարհն ըստ Ստոյն Մովսիսի Խորենացույ Աշխարհագրութեան, «Հանդես ամսօրյա», 1902, դեկտեմբեր, էջ 405:

¹⁰ Бартольд, նշվ աշխ., էջ 390—391:

վարտի գլուխգործոցը, կարելի է պատկերացնել, թե ինչ մեծ ծառայություն է մատուցել «Աշխարհացոյց»-ը համընդհանուր պատմագիտությանն ու անշուշտ նաև Մարկվարտին և թե ինչքան շնորհակալ պետք է լինի հայագիտությանը Մարկվարտից՝ մեր մատենագրության այդ գանձը մարկվարտյան հմտությամբ միջազգային ասպարեզ դուրս բերելու համար:

Միայն դարձանալ կարելի է, թե ինչպես է կարողացել բազմատաղանդ հետազոտողը «Աշխարհացոյց»-ի՝ «Որանշահր»-ում ընդամենը ութ էջ կազմող հայերեն բնագրի հիման վրա կառույցել 358 էջանոց մի հոյակապ կերտվածք, որը կանդուն կմնա, քանի դեռ գոյություն կունենա իրանին վերաբերող գիտությունը:

«Որանշահր»-ի նշանակությունը միայն իրանագիտությամբ չի սահմանափակվում: Այնտեղ բնաված հարցերն այնքան բազմազան են, որ նրանց զրախոսությամբ նույն կերպից ու Շավանից բացի զրադվել են նաև տաս ուրիշ գիտնականներ (Շլեզել, Դե Գոնյե, Լեվի, Հոմմել և այլք), որոնց մեջ կան շինագետներ, բյուզանդագետներ, թուրքագետներ, սեմիտոլոգներ, աստվածաբաններ, իսլամագետներ և այլն: Հայագիտության համար «Որանշահր»-ի նշանակությունը կայանում է այն բազմաթիվ բնագրական ճշգրտումների, օտար աղբյուրների միջոցով Հայաստանի տեղագրության ուսումնասիրության ու տեղանունների նույնացման և բանասիրական ու պատմական դանդաղ մյլ հարցերի լուծման մեջ, որոնք խիստ շահեկան են հայագիտության համար: Արժարժված է նաև Մովսես Խորենացու ինքնության և ապրած ժամանակի հարցը: Մարկվարտը նույնացնելով «Աշխարհացոյց»-ի և «Հայոց պատմության» հեղինակներին, գտնում էր, որ Մովսես Խորենացին ապրել է VIII դարում: Բանասերներն արդեն նշել են այս կապակցությամբ բերված փաստարկների առարկելիությունը: Նույն աշխատության մեջ քննարկված է նաև «Աշխարհացոյց»-ի երկու խմբագրությունների (համառոտ և ընդարձակ) հարցը, շոշափված են Կորյունի «Վարք Մշտոցի» երկի խմբագրությունները և այլն:

Ինչպես «Որանշահր»-ի, այնպես էլ նրանից առաջ և հետո լույս տեսած իրանագիտական հրատարակությունների դանդաղ հատվածներ կարելի է միաժամանակ դասել Մարկվարտի հայագիտական աշխատությունների շարքը: Դրանցից մի քանիսը թարգմանվել են հայերեն և վերաբերում են Փավստոս Բուզանդի տվյալների քննությանը («Հանդես ամսօրյա», 1897, էջ 5—9, 183—186), հաղարապետ տիտղոսին (նույն տեղում, 1898, էջ 316—330), հայ բղջիխներին (նույն տեղում, 1903, էջ 1—5, 114—119, նաև՝ առանձին գրքով), վրաց Բագրատունիների ծագմանը (նույն տեղում, 1912, էջ 333—339, 519—531, 712—730, 1913, 160—167, 210—221, 281—293, 463—475, 659, նաև՝ առանձին գրքով), հայ Արշակունիների հնագույն պատմությանը (նույն տեղում, 1906, էջ 33—44) և այլն:

Ժամանակագրական առումով իր երկրորդ իրանագիտական աշխատության («Նյութեր իրանի պատմության և ավանդությունների վերաբերյալ») մեջ Մարկվարտը քննել է հայ Արշակունիների արքայացանկը¹¹:

Իրանագիտության մեջ կարևոր ավանդ է հանդիսանում Մարկվարտի նաև «Հետազոտություններ իրանի պատմության շուրջ» ուսումնասիրությունը, որի նպատակն է քննել և ճշգրտել իրանի պատմության վերաբերյալ աղբյուրը: «Հին Արևելքի, առանձնապես իրանի պատմության բնագավառը,—գրում է Մարկվարտը,—պետք է նախ մաքրել որոշ քարակույտներից, ապա նոր ոտք դնել իրանական պատմության հողի վրա»¹²: Այս դիրքերից ելնելով Մարկվարտը բանասիրական մշակման է ենթարկում դանդաղ աղբյուրագիտական տվյալներ և հող նախապատրաստում իրանի պատմության համար: Հին և միջնադարյան իրանի պատմությանը վերաբերող՝ Մարկվարտի հիմնական աղբյուրներն են ոչ թե իրանական աղբյուրները, այլ հունա-հռոմեական, հայկական, ասորական, արաբական:

Հայագիտական հետաքրքրություն կարող է ներկայացնել «Հետազոտություններ»-ի այն հատվածը, որտեղ քննված է կարծեցյալ Զարիադրեսի դրամների և Մոփթի թագավոր Զարեհի առնչությունը¹³, 1877 թ. գերմանացի գիտնական Ֆրիդլենդերը հրապարակեց Բեռլինի թանգարանում պահվող երեք պղնձյա դրամների նկարագրությունը¹⁴: Մեկ ուրիշ գիտնական՝ Օ. Բլաուն, դրամների վրա հանդիպող ΔΣΑΡΙ մականգրությունը վերծանեց որպես Δαριδρις անուն, որը ինչպես հայտնի է, նույնանում է Մոփթի թագավոր Զարեհի անվան հետ: Մարկվարտը համեմա-

¹¹ Beiträge z. Geschichte und Sage v. Eran, ZDMG, XLIX, 1895, էջ 628—673.

¹² Untersuchungen. H. I, էջ V.

¹³ Die angeblichen Zariadrismünzen und die Fürsten v. Sophene.

¹⁴ Friedländer, Kupfermünze des Berliner Museums:—Zeitschrift für Numismatik, II (1877), էջ 266—268.

տական ուսումնասիրության ենթարկելով դրամները, գալիս է այն եզրակացության, որ ոչ մի կապ չկա Զարիադրես անվան և ՃՆԱՐԼ Բաբի միջև: Այս բառը Մարկվարտը նույնացնում է խատտական *Ziřās* տիտղոսի հետ, որը Պ. Ֆենսենը բացատրել է հայերեն «ծեր» («ավագ») բառով: Այսպիսով, մինչև այդ որպես հատուկ անուն դիտված մակագրությունից Մարկվարտն ստանում է կապադովկիական մի բառ, որը լեզվագիտական հազվագեպ նշանակություն ունի, քանի որ կապադովկիական մեռած լեզվից կյանքի է կոչվում ևս մի բեկոր:

Գիտական աշխարհը որպես հեղաշրջում ընկալեց նաև Մարկվարտի մեկ ուրիշ աշխատություն, որն այս անգամ արդեն վերաբերում էր թուրքագիտությանը: Նկատի ունենք «Հին թուրքական արձանագրությունների ժամանակագրությունը» հետազոտությունը¹⁵, որով Մարկվարտը ցույց տվեց, որ Օրխոնյան նորահայտ արձանագրություններում հանդիպող թվերը որպես ժամանակագրական միավորներ ընկալելիս այսուհետև պետք է դիմել հաշվումների բոլորովին նոր եղանակի, քանի որ այդ թվերից շատերը տաս տարով ավելի պակաս նշանակություն ունեն, քան մինչև այդ ընդունված էր կարծել: Ցույց տալու համար, թե մտքի ինչպիսի անսովոր թոփք էր պետք, որպեսզի Մարկվարտը հասներ այս հայտնագործությանը, բավական է ասել, որ, ըստ Մարկվարտի, արձանագրությունում հանդիպող «մեկ-քսան» արտահայտությունը նշանակում է ոչ թե «քսան մեկ», այլ՝ «տասնմեկ»: Ֆրանսիացի ականավոր արևելագետ Պ. Պելլիոն Մարկվարտին կոչում է «սրտասովոր էրուդիցիայի» և «իսկական գուշակողության տեր գիտնական»¹⁶, Houtsma-ն ասում է, որ Մարկվարտը տիրապետում էր գիտական հնարամտության բացառիկ կարողությունների և երբեմն ինչ որ գուշակում էր՝ ճիշտ այդպես էլ գտնում էինք իրականում: Հնդկական-բրահմանական ժուռնալիստական Մարկվարտի նվիրած հետազոտության կապակցությամբ գերմանացի գիտնական Յոզեֆ Վայսը նշում է «Մարկվարտի ապշեցուցիչ գիտնականությունը և գյուտարարության ձիրքը»¹⁷: Թեև ողոր նույնպես ուշադրություն է հրավիրել Մարկվարտի «պանծալի սրամտություն»¹⁸, իսկ Գաֆանը՝ «ծովածավալ ու հզոր բազմահմտության» վրա¹⁹: Ժամանակակից արևելագիտության նահապետը՝ Քեմբրիջի համալսարանի արևելագիտական ֆակուլտետի պրոֆեսոր Վ. Ֆ. Մինորսկին, որը երկու տարի հետո նշելու է իր 90-ամյակը և որին մենք պարտական ենք Մարկվարտի տպագիր ուսումնասիրությունների լիակատար մատենագիտության համար, գրում է. «Այս գիտնականը (Մարկվարտը — Ի. Ա.) խոր անհատականության հետքեր է թողել այն բոլոր բնագավառների մեջ, որտեղ նա տարածել է իր արտասովոր էրուդիցիան և որոնց վրա նա սփռել է իր կատաբյալ գուշակողության ճառագայթները»²⁰: Մարկվարտի հետ միևնույն տասնամյակում ծնված, միևնույն տարին վախճանված և դարձյալ գիտական մեծ փառքի արժանացած արևելագետ Բարտոլդը, որը Ռուսաստանում Մարկվարտի ամենաանկեղծ գնահատողներից մեկն էր, իր գրչակից ընկերոջը համարում էր «արուսիարգ օժտվածության տեր», «տաղանդավոր և վաստակավոր արևելագետ-պատմաբան, որն իր գիտական հետաքրքրությունների և գիտելիքների բազմա-կուղմանությամբ հազիվ թի իրեն հավասարն ունենա ժամանակակից արևելագետների շրջանում»²¹: Իսկ այն տարիներին այդ «ժամանակակից արևելագետներն» էին այնպիսի հսկաներ, ինչպիսիք էին հենց ինքը Բարտոլդը, Նուդեկեն, Մաուր, Կրաչկովսկին և շատ ու շատ ուրիշներ:

Անշուշտ ամեն ինչ չէ, որ Մարկվարտի աշխատություններում կատարյալ է, և մեծանուն գիտնականի բոլոր դրույթները չէ, որ ընդունելի են: Բայց պետք է հիշել Բարտոլդի հետևյալ խոսքերը. «Մարկվարտի կյանքի և գործունեության մեջ հավանաբար դեռ շատ բան մեզ համար ավելի հասկանալի կդառնա, երբ առավել մեծ լիակատարությամբ հավաքված կլինեն նրան վերաբերող կենսագրական և բիրիդգրաֆիկ տեղեկությունները: Ավելի հասկանալի կդառնան, հավանաբար, նաև նրա աշխատությունների թերի կողմերի պատճառները, շնայած պետք է հուսալ, որ նրանց հիշատակն ավելի շուտ կչքանա, քան հիշատակը այն դրական վաստակների, որոնց համար պատմական գիտությունը պարտական է Յոզեֆ Մարկվարտի տաղանդին և անխոնջ աշխատանքին»²²:

¹⁵ Die Chronologie der alttürkischen Inschriften. Mit einem Vorwort von Prof. W. Bang. Leipzig, 1898.

¹⁶ „Journal asiatique“, avril, 1920, էջ 129 և 183:

¹⁷ Бартольд, էջ 396:

¹⁸ ZDMG, 1902, էջ 427—436 (գրախոսականի էջերը):

¹⁹ JA, 1901, էջ 550—558:

²⁰ Minorsky, Essai, էջ 313:

²¹ Бартольд, նշվ. աշխ., էջ 387, 388:

²² Նույն տեղում, էջ 398:

Մարկվարտը հատուկ ուսումնասիրություն է գրել Աֆրիկայի մի շարք երկրների (Նիգերիա, Սուդան, Մալի, Գվինեա, Գանա, Եթովպիա, Նգիպտոս) ժողովուրդների պատմության և արվեստի մեքարերյալ²³։

«Երանշահր»-ից հետո երկրորդ ծավալուն աշխատությունը, որը կոչվում է «Արևելամիտոպական և արևելաասիական հետախուզումներ» և որն իրենից ներկայացնում է ազգագրական և պատմա-տեղագրական ուսումնասիրությունների մի բաղամասի մի ժողովածու, Մարկվարտը նվիրել է սլավոնների, ռուսների, խազարների, չինացիների, հունգարների, վրացիների, հայերի և մի շարք այլ ժողովուրդների IX—X դարերի պատմության զանազան հարցերի լուսաբանմանը։ Ռուսներին, վրացիներին և սիրիայան ժողովուրդներին են վերաբերում Մարկվարտի նաև մի քանի այլ աշխատություններ²⁴։

Երբայցիներին՝ հին հրեաների լեզուն, գրականությունն ու պատմությունը իրենց արտացոլում են գտել Մարկվարտի «Խորանկական և հրեական պատմության հիմունքներ»²⁵ հետազոտության մեջ։

Բայց կա աշխարհում մի ժողովուրդ, որին ամենից շատ է սիրել Մարկվարտը՝ դա հայ ժողովուրդն է։ Հարսդատ մնալով իր ինքնատիպ խառնվածքին՝ նա գերմաներեն Markwart-ը թարգմանեց հայերեն՝ «Բղեշխյան» և ցանկացավ կրել հայի ազգանուն։

Մարկվարտի զուտ հայագիտական շուրջ երեսուն ուսումնասիրություններից, որոնց մի մասը գեո անտիպ է, ժամանակագրական կարգով առաջինը թերևս պետք է համարել Մեկրոպ Մաշտոցին և հայոց այրուրենին նվիրված ուսումնասիրությունը²⁶ (եթե չհաշվենք «Հուշարձան»-ում տպված և հայագիտական վերնագիր ունեցող մի հոդված, որը կիսով չափ վերաբերում է նաև իրանական բանասիրությանը²⁷)։ Այս հետազոտությունը երկու անգամ թարգմանված է հայերեն²⁸ և՛ մանավանդ Մաշտոցի 1600-ամյակի կապակցությամբ՝ բավական ծանոթ է գիտական հասարակայնությանը։ Սույն աշխատությունը 1902 թ. կարդացվել է «Արևելագետների միջազգային կոնգրեսում», իսկ 1905 թ. արժանացել է Մոսկվայի Հազարյան ճեմարանի մրցանակին։

Մարկվարտի հայագիտական մյուս հետազոտությունների համար նյութ են մատակարարել հարավային Հայաստանը և Տիգրիսի աղբերակունքները ըստ հունական և արաբական աշխարհագիրների, Արտաքսատա-Արմաստիկա երթուղին, հայերի օրրանը, Մովսես Կաղանկատվացու զանազան տեղեկությունները, հայ Բագրատունիները և այլն։

Մեծանուն գիտնականի հանկարծակի վախճանի պատճառով անտիպ մնացած երկերի թիվը, մեզ հայտնի տվյալներով, շուրջ քսանհինգ է։ Սրանցից երկուսը հետմահու հրատարակեց Հռոմի Pontificio Istituto Biblico ինստիտուտի պրոֆեսոր Զուգեպպե Մեսսինան²⁹, իսկ մեկը՝ տոգերիս հեղինակը³⁰։

²³ Die Bontn—Sammlung des Reichsmuseums für Volkerkunde in Leiden. Beschrieben und mit ausführ. Prologemonia z. Geschichte der Handelswege und Völkerbewegungen in Nord-Afrika versehen. Leiden. 1912.

²⁴ Über d. Herkunft u. d. Namen d. Russen:—„Baltische Monatsschrift“, Riga, B. 76, H. 10, Oct. 1913, էջ 364—367; Skizzen zur Geschichtlichen Volkerkunde von Mittelasien und Sibirien:—„Ostasiatische Zeitschrift“, Berlin, 1919—1920, S. 289—299. Die Bekehrung Iberiens u. d. „beiden ältesten... d. iberischen Kirche:— „Caucasica“ f. 7, 1931, p. 111—167, Iberer und Hyrcanier:— „Caucasica“, 8, 1931.

²⁵ Fundamente Israelitischer und jüdischer Geschichte, Göttingen, 1896.

²⁶ Über d. Ursprung des armenischen Alphabets in Verbindung mit der Biographie d. h. Maštoṣ:— «Հանդես ամսօրյա», 1912, 41—54, 199—216, 742—750 (նաև՝ առանձին գրքով՝ Wien, 1917).

²⁷ Armenische Streifen:— «Հուշարձան», Վիեննա, 1911, էջ 391—392:

²⁸ «Պատմություն հայերեն նշանագրերու և վարուց ս. Մաշթոցի», Թարգմ. Ա. Վարդանյանի, Վիեննա, 1913, և՛ «Հայոց այրուրենի ծագումը և ս. Մաշտոցի կենսագրությունը», գերմաներենից թարգմանեց Գ. Արզարյան, «Մեկրոպ Մաշտոց. հոդվածների ժողովածու», ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1962, էջ 117—180:

²⁹ Der Erste Kapitel der Gatha ustavati (Iasna 43). Herausgegeben von I. Messina, Rome, 1930 և Die Entstehung der armenischen Bistümer. Kritische Untersuchung der armenischen Bistümer. Herausg. von I. Messina, Roma, 1932.

³⁰ Die Provinz Parskahajkh=«Պարսկահայր նահանգը». գերմաներեն անտիպ բնագիրը թարգմանեց, ծանոթագրեց և պատրաստեց հրատարակչության՝ Գ. Վ. Արզարյան. — «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 1, էջ 180—207 և № 2, էջ 212—244:

Մարկվարտի գրիչն սերնդունակ էր անկարևոր տողեր գրելու, ուստի և դժվար է ասել, թե անտիպ գործերից որոնք են երկրորդականները, որոնք՝ զլխավորները: Այստեղ կան Կորյունի, Ագաթանգեղոսի, Փավստոսի, Նազար Փարպեցու, Խորենացու, Սերեոսի, Ղեկնդի, Շապուհ Բագրատունու, Մովսես Կազանկատվացու սնունդները կրող նյութեր (մասնակի թարգմանություններ և ուսումնասիրություններ), որոնց շարքում գտնվող Կորյունի «Մաշտոցի վարքի» գեղմաներն են թարգմանությունը անշուշտ մեծ ներդրում է հայագիտության ոսկե ֆոնդում: Խիստ կարևոր են Մար Աբասի Հայոց նախնական պատմությանը, Անանունի և Շապուհ Բագրատունու պատմություններին նվիրված ուսումնասիրությունները, այնուհետև՝ հետևյալ խորագրերն ունեցող մանր ու մեծ հետազոտությունները. «Հայկական վերլուծություններ», «Հայերը լեզվաբանական և բանասիրական առումով», «Հայոց մասնակի թագավորությունների ժամանակագրությունը», «Նյութեր հայոց պատմության վերաբերյալ», «Մանագեղոսի ժողովը», «Հայերը որպես դաղթարնականներ», «Հայերը և փոյուզիացիները»:

Մեծ գիտնականի գրական անտիպ ժառանգության հրապարակումն ու հանրագույտ ուսումնասիրությունը կլինի նրա հիշատակի հավերժացման լավագույն արտահայտությունը: